ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 569

28 դեկտեմբերի 2021 թվականի N -Ա

ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 25-ի N 1079-Ն որոշումը՝

որոշում եմ.

1. Սյունիքի մարզի Տեղ գյուղի Ս. Բարխուդարյան 11/2 հասցեում գտնվող «Տեղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքը՝ 152 քառ. մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնելու նպատակով ստեղծել գույքի հանձնման հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Արմեն Թադևոսյան	-	Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Արփինե Բաղդասարյան	-	Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի մասնագետ
Ժակլին Ավետիսյան	-	«Տեղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Նազելի Հովհաննիսյան	-	«Տեղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվապահ:

2. Հանձնաժողովին՝ մինչև 2022 թվականի հունվարի 27-ն ապահովել նախատեսված գույքի հանձնման աշխատանքների իրականացումը և ներկայացնել տեղեկատվություն:

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

29.12.2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 28
ք. Կապան